ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ <<ԷԱՃԱՊՁԲ-2019/8-2-ԵՊԲՀ>>

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի կարիքների համար **միկրոհամակարգչային սարքերի** ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ԷԱՃԱՊՁԲ-2019/8-2-ԵՊԲՀ>>** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ **2018 թվականի դեկտեմբերի 13-ին** ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ **2018 թվականի դեկտեմբերի 14-ին** տրամադրված պարզաբանումները:

Հարցադրում: Հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ կետը, խնդրում եմ տրամադրել պարզաբանում ԷԱՃԱՊՁԲ-2019/8-2-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի վերաբերյալ: Հարցում 1. Հրավերի գնման առարկայի տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքատեսակը, որը պահանջում է դիստրիբյուտորի ավտորիզացիոն նամակ (DAF)՝ արտադրվում է թվով երեք արտադրող ընկերությունների կողմից՝ HP, Lenovo, Dell: Բոլոր երեք ընկերությունների հավաստմամբ՝ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով միկրոհամակարգիչները անհամատեղելի են նույն տեխնիկական բնութագրով սահմանված՝ POE պահանջի հետ, մասնավորապես՝ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով thin client ապրանքատեսակը չի արտադրվում POE-ի հնարավորությամբ: Պահանջի դեպքում վերոնշյալը կարող է հիմնավորվել բոլոր երեք արտադրող ընկերությունների գրություններով: Կբավարարի արդյոք մասնակցի հայտը, եթե առաջարկվի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի բոլոր նվազագույն պահանջները բավարարող ապրանքատեսակ, հիմք ընդունելով վերոգրյալ հանգամանքը: Եթե, ոչ ապա հիմք ընդունելող գնումների մասին ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ կետը խնդրում եմ հրավերում կատարել համապատասխան փոփոխություն:

Պարզաբանում: Հարգելի մասնակիցներ, տեղեկացնում ենք, որ կբավարարվի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը, եթե առաջարկվի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի բոլոր նվազագույն պահանջները բավարարող ապրանքատեսակ, հիմք ընդունելով վերոգրյալ հանգամանքը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **<<ԷԱՃԱՊՁԲ-2019/8-2-ԵՊԲՀ>>** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար **Պ. Գաբրելյանին:**

Հեռախոս՝ **011-62-10-50:**

Էլեկտրոնային փոստ՝ **marketing.ysmu10@gmail.com**:

<<ԷԱՃԱՊՁԲ-2019/8-2-ԵՊԲՀ>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

_____ Դ. Հովակիմյան
(ստորագրությունը)

_____ Ա. Խաչիյան
(ստորագրությունը)

_____ Ա. Պետրոսյան
(ստորագրությունը)

_____ Պ. Գաբրելյան
(ստորագրությունը)